Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2025 թ. փետրվարի 7-ին կայացած թիվ 11 արտահերթ նիստի

Կենսաբանության ֆակուլտետի ԳԽ փետրվարիի 7-ի հարցման կարգով թիվ 11 արտահերթ նիստի օրակարգում ներառված էր 2 հարց:

1. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ԻՀ ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2023» միջազգային մրցույթի շրջանակներում իրականացվող թեմաների ամփոփիչ հաշվետվության հարցը:
2. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների ներկայացման հարցը:

1. ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, կ.գ.դ. Մարինե Սեմյոնի Առաքելյանի՝ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ԻՀԱՀԽ 2023» մրցույթի շրջանակներում իրականացվող «Հայաստանում երկկենցաղների և սողունների որոշ տեսակների առողջության գնահատումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նոր, վարակիչ հարուցիչներին» 23SC-CNR-1F001 ծածկագրով թեմայի ամփոփիչ հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ Մ.Ս. Առաքելյանը: Նշվեց, որ ծրագրի նպատակն է ուսումնասիրել Հայաստանում վայրի սողունների՝ մասնավորապես *Testudo graeca*-ի օրգանիզմում զոոնոզները: Հետազոտությունների ժամանակ իրականացվել են դաշտային նմուշառումներ և լաբորատոր ուսումնասիրություններ, որոնց ժամանակ օգտագործվել են տարբեր մեթոդներ: ELISA թեստի արդյունքում որոշ առանձնյակների մոտ հայտնաբերվել են հակամարմինների ցածր տիտրեր *Testudinid herpesvirus*-ի դեմ: Մանրադիտակային հետազոտությամբ ուսումնասիրվող 16 առանձնյակների մոտ հայտնաբերվել են արյան մակաբույծներ: Իքսոդային տզերի 13 նմուշներ մորֆոլոգիապես նույնականացվել և պահպանվել են ապագա գենետիկական վերլուծության համար: Այս տզերը կարող են կարևոր դեր խաղալ որպես պաթոգենների վեկտորներ, որոնք ազդում են սողունների

պոպուլյացիաների վրա: Ծրագրի շրջանակում հայկական խմբի ղեկավարը չորս անգամ գործուղվել է Պերուջիայի համալսարանի անասնաբուժական ֆակուլտետ, իսկ իտալական գործընկերները այցելել են Հայաստան մասնակցելու համատեղ դաշտային աշխատանքներին: Կնքվել է համագործակցության պայմանագիր ԵՊՀ-ի և Պերուջիայի համալսարանի միջև, ինչի շրջանակներում այժմ իրականացվում է «Էրասմուս +» ծրագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերոհիշյալ թեմայի օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

2. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետից թեկնածուների առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Նա առաջարկեց Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Սերոբի Իսկանդարյանին, Նորայր Սիսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել նույն մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողուհի Գայանե Ռուդիկի Նազարյանին և Արմեն Թոչունյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի «Կիրառական մանրէաբանություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Գնելի Գրիգորյանին՝ հաշվի առնելով նրանց բարձր առաջադիմությունը, տեսական գիտելիքները և գործնական հմտությունները, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ուսանողների բարձր առաջադիմությունը, տեսական գիտելիքները և գործնական հմտությունները, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին շարունակել հատկացնել՝

1. Նորայր Սիսակյանի անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողուհի Գայանե Ռուդիկի Նազարյանին:

2. Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Սերոբի Իսկանդարյանին:

3. Արմեն Թոչունյանի անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի «Կիրառական մանրէաբանություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Գնելի Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Ճահազիզյան